I

ԱԼԵՔՍԵՅ ՋԻՎԵԼԵԳՈՎԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ՆՈՐԱՅՐ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Ալեքսեյ Կարապետի Ջիվելեգովը (1875–1952) իր ստեղծագործական կյանքն սկսեց նախ որպես միջնադարագետ (մեդևիստ) և ստեղծեց արևմտաեվրոպական միջնադարին վերաբերող արժեքավոր մի շարք մենագրություններ, իսկ հետագայում դիմեց նաև նոր ժամանակների քաղաքական պատմությանը: Այդ ասպարեզներից յուրաքանչյուրում նա հանդես է եկել որպես ինքնուրույն հետազոտող՝ մե՛ր գիտական շրջանառության մեջ դնելով նոր նյութեր, մե՛ր առաջադրելով հայտնի փաստերի նոր մեկնաբանություններ: Լինելով բնականից օժտված անհատականություն, Ալ. Ջիվելեգովը ոչ միայն զգում էր պատմությունը և գերազանց տիրապետում հետազոտության մեթոդին, այլև նյութի շարադրման հմայիչ վարպետ էր: Նրա բոլոր գրքերն ու հոդվածները գրված են պատմականության սկզբունքի անշեղ պաշտպանության գիտական բծախնդիր հետևողականությամբ: Պատմագիտության և ընդհանրապես գիտության մեջ նրա ավանդն այնքան նշանակալից ու պարտավորեցնող էր, որ Ջիվելեգովի աշխատություններից շատերը, իր իսկ կենդանության օրոք, թարգմանվեցին մի շարք լեզուներով:

Ո՞վ էր Ալ. Ջիվելեգովը, որտեղի՞ց սկսվեց նրա մեկնարկը և ինչպե՞ս ընթացավ նրա գիտական ուղին: Այդ մասին ուշագրավ պատմում է ինքը. «Ծնվել եմ 1875 թ. մարտի 14-ին, Դոնի Ռոստովում, հայ վաճառականի, ցավոք, վաղ սնանկացած ընտանիքում: Սկզբում սովորել եմ Դոնի Նախիջևանի նախակրթարանում, ապա՝ տեղի հայկական սեմինարիայում, իսկ 1887 թվականից՝ Ստավրոպոլի գիմնազիայում: Այն ավարտել եմ 1893 թ. և եկել եմ Մոսկվա՝ ընդունվելու համալսարան: Արդեն գիմնազիայում հափշտակվել եմ պատմությամբ, և ինձ Մոսկվա է բերել երեք լուսատուների՝ Գերյեի, Վինոգրադովի, Կլյուչևսկու փայլը: Համալսարանում շատ եմ աշխատել Պ. Գ. Վինոգրադովի ղեկավարությամբ, բայց ավելի շատ ժամանակ եմ տրամադրել խմբակներին: Առաջին իսկ օրերից ընդունվել եմ Կովկասի հայրենակցական խումբը և ուղիղ երկու տարի եղել եմ նրա ներկայացուցիչը միության խորհրդում (նկատի ունի ուսանողական հայրենասիրական խմբակների միությունը – Ն. Ս.): Երբ ավարտեցի, իմ պրոֆեսորներն ինձ առաջարկեցին մնալ համալսարանում: Գործը փչացրեց ոչ ռուսական ծագում ունեցող անձանց համալսարանում չթողնելու մասին բոգոլեպովյան շրջաբերականը…»[1]:

[1] “Русские ведомости”, 1863–1913. Сб. статей. М., 1913, с. 60.

Ցարական կառավարության ժողովրդական լուսավորության նախարար, ծայրահեղ հետադիմական Ն. Պ. Բոգոլեպովը հայազգի Ալ. Ջիվելեգովին արգելեց մնալ համալսարանում: Տաղանդավոր հայ երիտասարդի առաջ փակվում են համալսարանում գիտությամբ զբաղվելու բոլոր դռները: Ի՞նչ էր սպասվում նրան հիմա: Ի՞նչ պիտի լիներ նրա անելիքը: Դժվար էր գուշակել գալիքը, բայց Ջիվելեգովի համար մի բան պարզ էր՝ հարկավոր է դիմակայել բոլոր փորձություններին և զբաղվել գիտությամբ: Անհրաժեշտ էր մտածել միայն նյութական նվազագույն ապահովության՝ աշխատավարձի մասին: Նա զբաղվում է ժուռնալիստիկայով, հանդես է գալիս լիբերալ-բուրժուական ուղղության “Русские ведомости”, “Путь”, “Парус” *և այլ թերթերում: Քաղաքական իր գործունեության մասին Ալ. Ջիվելեգովը պատմում է. «1905 թ. ես հարեցի սահմանադրական–դեմոկրատական (կադետական –* Ն. U.*) կուսակցությանը, գործնական մասնակցություն ունեցա ագիտացիային, Առաջին դումայի նախօրեին մամուլում շատ ագիտացիա մղեցի: … Ազնվականության դեմ տպագրված հոդվածի համար ինձ դատական պատասխանատվության կանչեցին 129-րդ հոդվածի 6-րդ կետով (մեկ խավին մյուսի դեմ ապստամբելու համար), դատեցին… և մեկից երեք ամսվա բանտարկության վճիռ կայացրին: Ես բանտ նստեցի Մոսկվայում, Տագանկայում, 1909 թ.»*[2]*:*

Ժուռնալիստիկան և հասարակական լարված գործունեությունը, հետապնդումները չկարողացան խանգարել գիտական լուրջ աշխատանքին: Տակավին համալսարանում, միջնադարի ճանաչված պատմաբան Պ. Վինոգրադովի ազդեցությամբ պարզ դարձավ Ջիվելեգովի հետաքրքրությունը որոշակի հիմնահարցի՝ ուշ միջնադարում բուրժուազիայի վերելքի պատմության նկատմամբ: Հետագայում երիտասարդ գիտնականի ինքնուրույն հետազոտությունների արդյունքը եղան «Քաղաքական համայնքը միջնադարում» (1901 թ.), «Միջնադարյան քաղաքները Արևմտյան Եվրոպայում» (1902 թ.), «Միջնադարյան առևտուրը Արևմուտքում» (1904 թ.), «Իտալական վերածննդի սկիզբը» (1908 թ.), «Ժամանակակից Գերմանիայի պատմություն» երկհատորը (1908–1910 թթ.) գրքերը: Ալ. Ջիվելեգովը 1912 թ. մի շարք պատմաբանների հետ դարձավ “Голос минувшего” *ամսագրի խմբագիր-հրատարակիչը: 1915 թ. լույս տեսավ նրա «Ալեքսանդր Առաջինը և Նապոլեոնը»՝ ժամանակին մեծ անուն հանած գիրքը: Տակավին Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Ջիվելեգովը երկար տարիներ պատասխանատու աշխատանք է կատարել «Գրանատ հանրագիտական բառարանի» խմբագրությունում: Պատմության և սոցիոլոգիայի վերաբերյալ գիտնականի արժեքավոր շատ հոդվածներ լույս են տեսնում այդ հանրագիտարանի հատորներում: Ալ. Ջիվելեգովը մեծ գոհունակությամբ դիմավորեց Ռուսաստանի Փետրվարյան հեղափոխությունը: Եվ դա բնական է, քանզի լինելով կադետական կուսակցության անդամ, նա բուրժադեմոկրատական կարգերի ջատագով էր: Բայց իրողություն է և այն, որ երբ տեղի ունեցավ Հոկտեմբերյան հեղափոխությունը, Ալ. Ջիվելեգովը հեռացավ կադետական*

[2] *Նույն տեղում, էջ 61:*

կուսակցությունից: Ի տարբերություն բուրժուական այն շատ մտավորականների, ովքեր տարագրվեցին արտասահման կամ տեղում ակտիվորեն մասնակցեցին հակախորհրդային ելույթներին, Ալ. Ջիվելեգովը հարեց մտավորականության այն մասին, որը քաղաքական նոր հասարակական կառույցին համակիր դիրք գրավեց: Եվ ցարիզմի ժամանակ համալսարանում աշխատելու իրավունքից զրկված նախկին կադետը նոր պայմաններում իրավունք ստացավ աշխատելու համալսարանի ամբիոնում, դասավանդեց նոր պատմություն և պրոֆեսորի կոչում ստացավ: Սակայն 1924 թ. նա թողեց համալսարանը և որոշ ժամանակ դասախոսություն կարդաց թատերական ստուդիաներում ու գրականության բարձրագույն դասընթացներում, որոնք գլխավորում էր Վալերի Բրյուսովը:

1932 թ. Ալ Ջիվելեգովը Ա. Լունաչարսկու անվան թատերական ինստիտուտում գլխավորում էր արտասահմանյան թատրոնի պատմության ամբիոնը: Հետագայում մեծ գիտնականի ջանքերով «Ակադեմիա» հրատարակչությունը, ուր նա աշխատում էր 1933–1937 թթ., լույս է ընծայում առաջին անգամ ռուսերեն թարգմանված արևմտաեվրոպական բազմաթիվ գործեր: Այդ տարիներին իտալերենից կատարված բոլոր թարգմանություններն ուղեկցվել են Ջիվելեգովի առաջաբաններով, առաջաբաններ, որոնք պատմամշակութային և պատմագրական հանրագիտարանային անզուգական ակնարկներ են:

Ժամանակակից խորհրդային պատմաբանները գիտնականի 1920–1930-ական թվականների ստեղծած պատմագիտական բազում աշխատություններից առանձնապես անանց արժեք են վերագրում «Ֆրանսիական մեծ հեղափոխության բանակը և նրա առաջնորդները», «Դանթե Ալիգերի», «Լեոնարդո դա Վինչի», «Միքելանջելո» մենագրություններին:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին հայազգի խոշոր գիտնականը մնաց Մոսկվայում, շարունակեց իր գիտական և մանկավարժական գործունեությունը: Վախճանվեց 1952 թթ.՝ 77 տարեկանում: Ալ. Ջիվելեգովը հեղափոխական չէր, բայց ինքնակալության հակառակորդ էր, ազատախոհ մի անհատականություն, որը պայքարում էր առաջին հերթին գիտության, լուսավորության և մշակույթի ասպարեզներում հետադիմության, իր դարն ապրածի դեմ:

Գիտնականը չնայած իր կյանքն անցկացրել է ռուսական միջավայրում, չի գրել հայերեն, բայց միշտ գիտակցել և հպարտացել է, որ ինքը հայ է, պատկանում է մի հին քաղաքակիրթ ժողովրդի, որի խոտորված բախտը իրեն միշտ էլ խորապես հուզել ու տանջել է: Եվ պատահական չէ, որ իր հրապարակախոսական գործունեության հենց սկզբից և ողջ ընթացքում առանձնահատուկ ուշադրություն է նվիրել հայ ժողովրդի ողբերգական ճակատագրին[3]: Ալ. Ջիվելեգովը մամուլում հաճախ է գրել ցարական Ռուսաստանում և սուլթանական Թուրքիայում հայ ժողովրդի վիճակի մասին. հոդվածներից մեկը հայ եկեղեցու ունեցվածքի բռնագրավման վերաբերյալ ցարական հրահանգի վերացման անհրաժեշտությանն էր հետամուտ: Նա շատ մտերիմ էր հայ առաջադեմ գործիչ

---

[3] *Տե՛ս* Д ж. С. К и р а к о с я н. А. К. Дживелегов и его историко-публицистическое наследие. Ереван, 1986, с. 36–38.

Գրիգոր Զանշինի (Զանշյան) հետ: Հիշենք, երբ Ալ. Զիվելեգովին ոչ ռուս լինելու համար չթույլատրեցին մնալ Մոսկվայի համալսարանում, հենց Զանշինն էր, որ նրան տեղավորեց խմբագրությունում (Զանշինն աշխատում էր ”Русские ведомости” *լրագրի խմբագրությունում) և օգնեց դրսևորվելու ժուռնալիստիկայի ասպարեզում: Հետագայում Զիվելեգովը մեծապես երախտապարտ գտնվեց իր «անզուգական հովանավորի և հայրենասեր հայրենակցի» հիշատակի նկատմամբ՝ նրա անձի, հասարակական, գրական գործունեության մասին տպագրելով բարձր մակարդակի մի հոդված* “Мир божий” *պարբերականի 1900 թ. № 9-ում, իսկ Զանշինի հուշ երեկոյին, որը տեղի ունեցավ 1900 թ. վերջին Պետերբուրգում, կարդաց «Գրիգոր Ավետի Զանշինը և Հայկական հարցը» զեկուցումը: 1907 թ. վերահրատարակվում է (հետմահու) Գր. Զանշինի «Մեծ ռեֆորմների դարաշրջանը» պատմահրապարակախոսական աշխատությունը, որի համար գրած իր առաջաբանում Զիվելեգովը ներկայացնում է նաև արևմտահայության իրավունքների պաշտպանությանը հեղինակի մատուցած ծառայությունները: Այդ արժեքավոր առաջաբանը պատմագիտական առանձնահատուկ մի ակնարկ է: Այդտեղ և Թուրքիայում արևմտահայության կացությանը նվիրված իր հոդվածներում Ալ. Զիվելեգովը ցույց տվեց, որ Օսմանյան կայսրության պարտությունը 1877–1878 թթ. ռուս-թուրքական տասը ամիս տևած պատերազմում հայ ժողովուրդը դիմավորեց մեծ խանդավառությամբ: Պատերազմի արդյունքներն ամփոփող Սան-Ստեֆանոյի պայմանագիրը նպաստավոր էր ոչ միայն Ռուսաստանի, այլև բալկանյան ժողովուրդների և հայերի համար: Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածով պատմության մեջ առաջին անգամ բարձրացվում և քննարկման առարկա է դառնում Արևմտյան Հայաստանի խնդիրը՝ Հայկական հարց ձևակերպմամբ: Նկատի ունենալով, որ Հայաստանում գրաված, բայց Թուրքիային վերադարձվելիք վայրերից ռուսական զորքերի հեռանալը կարող է կռիվների և բարդությունների տեղիք տալ ու բացասաբար անդրադառնալ երկու պետությունների հետագա քաղաքական հարաբերությունների վրա, այդ հոդվածով թուրքական կառավարությունը պարտավորվում էր հայկական մարզերում, առանց հապաղման, գործադրել տեղական պայմաններից բխող բարեփոխություններ և բարենորոգումներ ու պաշտպանել հայերի ապահովությունը քրդերից և չերքեզներից:*

Արևմտահայության սպասելիքները, հարկավ, ավելին էին: Ռուսական բանակներին ցույց տված համակրանքի աջակցությամբ արևմտահայությունը ցանկանում էր երկիրն ամբողջությամբ ազատագրված տեսնել թուրքական բռնատիրությունից և միավորվել Ռուսաստանում կյանքի ու գույքի ապահովությամբ ապրող արևելահայության հետ: Հայ ժողովրդի ցանկությունը չկատարվեց, և բնավ ոչ Ռուսաստանի մեղքով: Եվրոպական տերությունները, առաջին հերթին Անգլիայի ճարպիկ դիվանագիտական լարախաղացությամբ, տապալեցին ոչ միայն արևմտահայության ազատագրական մտքի ծրագրավորածը, այլև 16-րդ հոդվածով նախատեսվածը, որը պատմական տվյալ պայմաններում, հայերի համար ինչ-որ չափով ձեռնտու էր, չարիքի փոքրագույնը: Եթե Սան-Ստեֆանոյի պայմանագիրը, դրա հետ նաև 16-րդ հոդվածը մնային ուժի

մեջ և գործադրվեին, կասկածից վեր է, որ արևմտահայերի ազատագրական պայքարն այլ ընթացք կունենար: Հենց այն հանգամանքը, որ 16-րդ հոդվածի գործադրման հսկողությունը դրվում էր միայն Ռուսաստանի վրա, և ռուսական զորքերը մնալու էին գրավված տարածքներում, մինչև որ կյանքի չկոչվեր 16-րդ հոդվածը, արդեն իսկ, ըստ Ջիվելեգովի, իրական երաշխիք էր Արևմտյան Հայաստանում տեղական պահանջներից բխող բարենորոգումներ մտցնելու, հայերի կյանքն ու կայքն ապահովելու համար: Տարաբախտաբար, Բեռլինի կոնգրեսը չեղյալ հայտարարեց Սան-Ստեֆանոյի պայմանագիրը: Իր ժամանակին դա ամենածանր հարվածն էր, որ հայ ժողովուրդն ստանում էր արևմտաեվրոպական տերություններից: Բեռլինի կոնգրեսը Հայկական հարցը դարձրեց մի խումբ մեծ տերությունների հետ կապված խնդիր, նրա լուծումը իրական ճանապարհից շեղեց և դրեց միանգամայն աննպաստ, նույնիսկ կործանարար ուղու վրա: Բեռլինի կոնգրեսի որոշումով Արևմտյան Հայաստանի մեծ մասը մնաց թուրքական տիրապետության տակ, որը ճակատագրական դեր խաղաց հայ բնակչության համար՝ նրան դատապարտելով բնաջնջման:

Հասկանալով, թե ինչ դեր կարող է խաղալ Հայկական հարցը մեծ տերությունների քաղաքականության մեջ Թուրքիայից նորանոր զիջումներ պահանջելու գործում, սուլթան Աբդուլ Համիդի կառավարությունը որոշեց վերջ տալ Հայկական հարցին՝ հայ ժողովրդի հալածանքն ուժեղացնելու ճանապարհով, մահմեդական մոլեռանդության և հակահայկական ազգայնականության բորբոքումով, մշտական սպանություններով և թալանով, բռնությամբ հայերին մահմեդականացնելով, քրդական անկանոն հեծելազորի ստեղծմամբ և այլն: 1880–1890-ական թվականներին դժնդակ պայմաններ ստեղծվեցին արևմտահայության համար: Հայկական հարցը և հայ ազատագրական շարժումը արմատախիլ անելու նպատակով Աբդուլ Համիդ արյունարբուն դիմեց հայերի ֆիզիկական բնաջնջման բիրտ ու դաժան աննախընթաց քաղաքականության: 1894–1896 թթ. արյան գետեր հոսեցին Սասունում ու Զեյթունում, ամբողջ Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաբնակ գրեթե բոլոր վայրերում զանգվածային կոտորածներ և կոտորածներ տեղի ունեցան: Տասնյակ հազարավոր հայեր վանդալների ձեռքից փախան և իրենց փրկությունը գտան Կովկասում, Ռուսաստանի տարբեր վայրերում: Ալ. Ջիվելեգովի բնորոշմամբ՝ հայ ժողովրդի ցեղասպանության մեծամասշտաբ քայլերն էին փորձարկվում: Սուլթան Աբդուլ Համիդի հիվանդ ուղեղում ամրակայել էր «Հայկական հարցը պետք է լուծել հայերին կոտորելով» դիվային ծրագիրը, մի ծրագիր, որը գաղափարապես հիմնավորել էր մեծ վեզիր Քյամիլ փաշան 1879 թվականին: Հայ ժողովրդի համար ստեղծված այդ ծանր ու դժնդակ տարիներին՝ 1890-ականներին, Ռուսաստանում Ալեքսանդր III-ի և ծայրահեղ խավարամոլ Կոնստանտին Պոբեդոնոսցևի կողմից իրագործվող քաղաքական հետադիմության պայմաններում, ռուս ժողովրդի լավագույն զավակները, ռուսական առաջավոր հասարակական շրջանները իրենց բողոքի ձայնը բարձրացրին թուրք ջարդարարների դեմ, պաշտպան կանգնեցին և օգնության ձեռք մեկնեցին արևմտահայերին:

Ալ. Ջիվելեգովը բարձր է գնահատում ռուս նշանավոր հրապարակախոսների, գրողների, գիտնականների ջանքերով և Գր. Ջանշիևի նախաձեռնությամբ 1897 թ. Մոսկվայում հրապարակված «Եղբայրական օգնություն Թուրքիայում տուժած հայերին» (ռուսերեն) գիրք-ժողովածուն, որը համառուսական հասարակական կարծիքի առաջ մի կողմից խստագույնս դատապարտում է թուրք ջարդարարներին, իսկ մյուս կողմից դրվատում, բարձր գնահատում հայ ժողովրդին, նրա հարուստ պատմությունն ու մշակույթը, համաշխարհային քաղաքակրթության մեջ այդ «թանկագին ժողովրդի» կատարած ներդրումը: Ջիվելեգովը գրախոսողի ու կենսագրողի դեր չի ստանձնում: Նա ուղղակի պատմում է, որ մինչև ժողովածուի հրատարակման նախաձեռնումը Գր. Ջանշիևը Մոսկվայի Լազարյան ճեմարանի և պետական համալսարանի իրավաբանության ֆակուլտետի շրջանավարտ է եղել, ակնարկներով ու հոդվածներով հանդես է եկել ռուսական մամուլում, պայքարել դեմոկրատական, բարոյական, իրավական նորմերի կենսագործման համար: Լինելով “Русские ведомости” *հրատարակիչ-խմբագիրներից՝ Ջանշիևը («Դին» կեղծանունով) գործուն մասնակցություն է ունեցել հայ ժողովրդի պատմությունն ու մշակույթը ռուսական հասարակայնությանը ներկայացնելու գործին, ուշադրություն հրավիրել արևմտահայերի ծանր կացության և նրանց ազատագրական պայքարի հարցերի վրա: Միջազգային իրավունքի և հումանիզմի պահանջներից ելնելով, Գր. Ջանշիևը իր «Հայկական հարցը Թուրքիայում» գրքույկում գրել է, որ Հայկական հարցը պետք է վճռել «իրավունքի, արդարության, մարդասիրության պահանջներին համապատասխան»:*

Հայկական հարցի լուծմանը նպատակամղված իր հարցադրումներով և հայրենասերի մտորումներով, համառուսաստանյան միջավայրում խնդրի շուրջը հայանպաստ քարոզչության կազմակերպման ուղղությամբ XX դ. ամբողջ առաջին քսանամյակի ընթացքում բացառիկ էր Ալ. Ջիվելեգովի դերը: Նա, ըստ էության, շարունակեց Գր. Ջանշիևի կիսատ թողած գործը: Լայն ընդգրկումների տեր գիտնականի կրծքի տակ տրոփող սիրտը թույլ չտվեց նրան դիմաշրջվել դեպի քաղաքականությունը և շրջանցել հայ ժողովրդի ճակատագրի հետ կապված կենսական հարցերը: Իր գրչով և կազմակերպական տաղանդով գիտնականը հայ ժողովրդի համար ամենածանր, պատասխանատու պահին ծառայեց նրա կարիքներին ու վշտերի հնարավոր մեղմացմանը, հանուն իր ժողովրդի, հանուն ճշմարտության բացահայտման, հանուն արդար գործի հաղթանակի Ռուսաստանի խոհեմ մտավորականության հետ կանգնեց միևնույն շարքում: Նա վառ ու խոհուն իր հրապարակախոսական ձիրքը ի սպաս դրեց Հայկական հարցի շուրջը հասարակական նպաստավոր կարծիքի մշակմանը: Ալ. Ջիվելեգովը պատկանում էր սակավաթիվ այն գործիչների, հրապարակախոսների ու պատմաբանների թվին, որոնք մշտապես, առանց ընդհատումների ուսումնասիրում էին երիտթուրքերի գաղափարախոսությունն ու քաղաքականությունը, խորապես թափանցում հայ ժողովրդի նկատմամբ մարդատյաց այդ քաղաքականության էության մեջ, ուշի ուշով հետևում Հայկական հարցում թուրքական

պետականության գլխավոր ուղենիշներին՝ սկսած աբդուլհամիդյան «զուլումի» ժամանակներից մինչև քեմալիզմի ծագումն ու ընթացքը:

1906 թ. Մոսկվայի “Труд и воля” *հրատարակչությունը լույս ընծայեց Ալ. Ջիվելեգովի «Հայերը Ռուսաստանում» գրքույկը, որը նրա քաղաքական-հայագիտական առաջին լուրջ և ծավալուն հրապարակումներ: Ինչպես նշում է հեղինակը, գիրքը գրվել էր 1905 թ. ռուսական առաջին հեղափոխությանն ուղեկցող հայ-թուրքական ջարդերի ժամանակ: Այդտեղ Ջիվելեգովը ռուս ընթերցողին ծանոթացնում է հայ ժողովրդի նորդարյան պատմությանը, ռուս ժողովրդի հետ ունեցած արժանահիշատակ կապերին: Անդրկովկասում ազգային հարցի սրման պայմաններում, երբ, Ջիվելեգովի արտահայտությամբ, ցարական իշխանությունները հրահրում էին ազգամիջյան ջարդեր, ինքը չէր կարող մնալ անտարբեր: Պատմական փաստերով նա ցույց է տալիս հետադիմության սատրապներին, որ ռուս-մահմեդական բոլոր զինաբախումներում հայերն օժանդակել են ռուսներին և վերջիններս այն գնահատել են արժանվույն: Պատմական իրողություն է և ներկայիս ռուս սերունդը պետք է գիտենա, որ XIX դարասկզբի ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմները ոտքի են հանում հայ ժողովրդին: Մի ժամանակաշրջան էր դա, երբ Արևելյան Հայաստանի ազատագրման և Ռուսաստանին միանալու համար մղվող պայքարը մտել էր նոր ու վճռական փուլ: Երբ Անգլիայի դրդումով, պարսկական բազմահազարանոց բանակը 1826 թ. հուլիսին ներխուժում է Ղարաբաղ և պաշարում Շուշի բերդը, հայերը ոտքի են կանգնում և ռուսական զորքի հետ կռվում ընդհանուր թշնամու դեմ: Երբ 1827 թ. սեպտեմբերի վերջերին ռուսական զորքն սկսում է Երևանի գրավման գործողությունները, բերդում եղած հայերն ամեն կերպ օգնում էին ռուսական զորքին: Ժամանակի հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ Ներսես Աշտարակեցին կոչեր էր ուղարկում Էջմիածնի, Օշականի, Աշտարակի և այլ բնակավայրերի հայերին, խնդրում ու պահանջում անհապաղ օգնության հասնել ռուսներին: Գեներալ Ի. Պասկևիչի բանակում գործող հայ կամավորական ջոկատները ռուսական զորքի հետ մարտնչում էին թշնամու դեմ, խիզախության օրինակներ տալիս: Պատահական չէ, որ հայերը հոկտեմբերի 1-ին Երևանի ազատագրումը դիտում էին որպես հայրենիքի փրկության խորհրդանիշ: Տակավին նոր էր ավարտվել ռուս-պարսկական երկրորդ պատերազմը, երբ 1828 թ. գարնանն սկսեց ռուս-թուրքականը: Ռուսական զորքը գեներալ Պասկևիչի հրամանատարությամբ աչքի ընկնող հաղթանակներ տարավ նաև այս պատերազմում, բայց ոչ առանց հայերի օգնության: Հայ կամավորների գործուն մասնակցությամբ ռուսական զորքը մեկը մյուսի հետևից գրավեց Կարսը, Ախալքալաքը, Ախալցխան, Արդահանը, Բայազետը, Ալաշկերտը, Էրզրումը, Բայբուրդը և այլ բնակավայրեր: Հայոց ուրախությանը չափ ու սահման չկար: Արևելյան Հայաստանից հետո Ռուսաստանի շնորհիվ ազատագրվում էր նաև հայ հայրենիքի մեծագույն հատվածը՝ Արևմտյան Հայաստանը: Սպասվում էր, գրել է Ջիվելեգովը, որ մահմեդական երկու պետությունների կողմից դարեր առաջ հրի ու սրի միջոցով բաժան-բաժան արված Հայաստանը վերս-*

տին կվերամիավորվեր, և Ռուսաստանի հովանավորության ներքո կստեղծվեր միացյալ ամբողջական Հայաստան, հավաքական հայություն[4]*:*

Համազգային նշանակություն ունեցող այդ վեհ գաղափարով էին ապրում բոլոր հայ հայրենասերները, ամբողջ ժողովուրդը: Սակայն, ցավոք, ի դերև ելան նրանց հույսերը: 1829 թ. սեպտեմբերի 2-ին Ադրիանապոլսում կնքված պայմանագրով, արևմտաեվրոպական տերությունների ճնշման տակ, Ռուսաստանը հարկադրված եղավ Թուրքիային վերադարձնել Արևմտյան Հայաստանի տարածքները. հայ ժողովրդի համար չափազանց ողբերգական մի իրողություն, որը, տարաբախտաբար, կրկնվեց նաև ռուս-թուրքական հետագա՝ 1853–1856 թթ. Ղրիմի և 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմների ժամանակ:

1911 թ. լույս է տեսնում Ալ. Ջիվելեգովի «Թուրքահայաստանի ապագան» մենագրությունը, որը Հայկական հարցի դիվանագիտության պատմության մասին բազմահմուտ գիտնականի կողմից գրված մի համապարփակ ակնարկ է: Գրքի շարադրանքն սկսվում է Բեռլինի կոնգրեսում Մ. Խրիմյանի գործունեությամբ, ուր ցույց է տրվում արևմտյան դիվանագիտության հանդեպ «արցունքի լեզվի» անզորությունը: Ուշագրավ է մասնավորապես գիտնականի այն դիտարկումը, թե երբ Բեռլինի կոնգրեսում Անգլիայի պրեմիեր-մինիստր Բիքոնսֆիլդը (Դիզրայելի) Ռուսաստանից հետ խլեց Բայազետն ու Ալաշկերտի հովիտը, որը Թուրքիան զիջել էր Սան-Ստեֆանոյով, բացահայտ էր դառնում, որ Ռուսաստանը վերածվում էր քաղաքական մեծ խաղի իսկական օբյեկտի: Ջիվելեգովը համոզված էր, որ անհնար է վերջ տալ թուրքական վայրագություններին՝ հուսալով պաշտոնական Եվրոպայի համակրանքն ու աջակցությունը: Չէ՞ որ սուլթանը լավ գիտեր, գրել է Ջիվելեգովը, որ Առաջավոր Ասիայի լեռներում ցիրուցան, մի բուռ հայ ժողովրդին կարեկցելու համար Եվրոպան իրեն տհաճություններ չի պատճառի, քանզի ոչ թե «նույնադավան քրիստոնյա ժողովրդի հանդեպ կարեկցությունն է որոշում Եվրոպայի վերաբերմունքը դեպի հայերը, այլ կապիտալը, շահը»[5]*: Հենց հանուն կապիտալի ու շահի էր, որ «քաղաքակիրթ» Եվրոպան պաշտպանում էր բարոյալքված Օսմանյան կայսրությանը, որ պատերազմում հաղթանակած Ռուսաստանը չկարողացավ ամրապնդել իր հաղթանակի պտուղները: Նրա բեռլինյան պարտությունը հարդարվել էր Անգլիայի ջանքերով ստեղծված հակառուսական եվրոպական խմբավորման միասնական ճակատի կողմից: Թուրքիայի «ստատուս քվոն» պաշտպանելու հոգսով շահագրգռված էր նաև Գերմանիան, որը, իր կանցլեր Բիսմարկի արտահայտությամբ, քվեարկեց մեծամասնության հետ և «Ռուսաստանը մնաց փոքրամասնության մեջ»*[6]*:*

Պատերազմին ամենևին չմասնակցած Անգլիան, շնորհիվ իր կապիտալի հզորության և դիվանագիտական հաջողության, ոչ միայն տիրացավ Կիպրոսին, այլև Արևմտյան Հայաստանը դարձրեց իր կնքած «պատվավոր հաշտության» սեղանի զոհը, որ «բրիտանական կառավարության քաղաքականությունը

---

[4] *Տե՛ս* А. Д ж и в е л е г о в. Армяне в России. М., 1906, с. 6–7.

[5] А. Д ж и в е л е г о в. Будущее Турецкой Армении. М., 1911, с. 10.

[6] О. Б и с м а р к. Мысли и воспоминания. Т. 2, М., 1940, с. 217.

ճակատագրական անխուսափելիությամբ հանգեցրեց 1895–1896 և 1909 թթ. սոսկալի սպանդին և 1915 թվականի զարհուրելի կոտորածին»[7]*: Եվրոպական մեծ տերություններից լքված և խաբված հայ պատվիրակները, Բեռլինից մեկնելուց առաջ, կոնգրեսին ներկայացրած իրենց վերջին բողոքագրում հայտարարում էին, թե հայ ժողովուրդը երբեք չի դադարի իր ձայնը բարձրացնել, մինչև որ Եվրոպան կատարի նրա պահանջների արդար դատաստանը. պատրանքաշատ մի մտայնություն, որ, տարաբախտաբար, գոյատևեց շատ երկար…*

Ալ. Ջիվելեգովը մի պահ ավելորդ լավատեսությամբ համոզված էր, թե Առաջին համաշխարհային պատերազմի արդյունքներով կլուծվեն բոլոր այն հարցերը, որոնք տեղ էին գտել 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրի մեջ: Նրա լավատեսությունը խարսխվում էր այն խաբուսիկ իրատեսության վրա, թե Թուրքիայի, Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի պարտությունից և հաղթողների ողորմածությանը հանձնվելուց հետո, Օսմանյան կայսրության տարածքի վրա ստեղծվելիք ինքնավար մյուս կազմավորումների շարքում իր արժանի տեղը կունենա նաև Հայաստանի ինքնավարությունը: Կյանքը ցույց տվեց, սակայն, որ Ջիվելեգովը և իր նման լավատեսները չկարողացան նշմարել գալիքի տխուր հեռապատկերները:

Ալ. Ջիվելեգովը Մեծ եղեռնից հետո էլ, ի դեմս Ռուսաստանի, տեսնում էր արյունաքամ հայ ժողովրդի պաշտպանին: Նա 1916 թվականից հրատարակվող ”Армянский вестник” *շաբաթաթերթի կազմակերպիչներից էր, ապա՝ խմբագիրը: Իր մեծ հեղինակությամբ ու եռանդով Ջիվելեգովը շաբաթաթերթի շուրջն էր համախմբել ռուս մտավորականության լավագույն ներկայացուցիչներին, որոնք հանդես էին գալիս հայ ժողովրդի շահերի պաշտպանությամբ, Հայկական հարցի արդարացի լուծման օգտին: Շաբաթաթերթում հոդվածներով, ուսումնասիրություններով, գեղարվեստական ստեղծագործություններով, թարգմանություններով հանդես էին գալիս ժամանակի հայ և ռուս հասարակական-քաղաքական, գրական ու գիտական բնագավառների բազում հայտնի ներկայացուցիչներ՝ Լ.Եռն, Տ. Հախումյանը, Խ. Քուչուկ-Հովհաննիսյանը, Գ. Չուբարը, Գ. Չալխուշյանը, Ս. Գորոդեցկին, Վ. Բրյուսովը, Վ. Նեմիրովիչ-Դանչենկոն, Յու. Վեսելովսկին, Պ. Դոլգորուկովը, Ս. Կոտլյարևսկին և ուրիշներ, որոնք լուսաբանել են հայ ժողովրդի տնտեսական ծանր վիճակը, հասարակական-քաղաքական կյանքը, բացահայտել Արևմտյան Հայաստանում թուրքական կառավարության քաղաքականության շարունակվող վանդալիզմը, անդրադարձել փախստականների ողբերգական կացությանը: Շաբաթաթերթում հրապարակվել են Մեծ եղեռնի մասին համաշխարհային հասարակայնության արձագանքները, կարևոր ուշադրություն է դարձվել ռուսական Կովկասյան բանակի գործողություններին, հայ կամավորական շարժմանը, արևմտահայության ինքնորոշման խնդիրներին:*

1916 թ. գրած «Հայաստանի ճակատագիրը» հոդվածում Ալ. Ջիվելեգովը դատապարտում էր երիտթուրքերի քաղաքականությունը, մեծ տերությունների

---

[7] Л л о й д Д ж о р д ж. Правда о мирных договорах. Т. 2, М., 1957, с. 390.

դիրքորոշումը Հայկական հարցում, գոյատևող արևմտահայության փրկությունը տեսնում թուրք-գերմանական խմբավորման շուտափույթ պարտության մեջ: Խոսելով գերմանական իմպերիալիստների հակառուսական աշխարհաքաղաքական ծրագրերի մասին՝ նա ցույց է տվել նաև նրանց անմիջական մասնակցությունը հայկական ցեղասպանությանը: Ըստ այդ ծրագրերի, սահմանային գոտիները հայերից մաքրելը դիտվում էր որպես ռուս-թուրքական ռազմաճակատի ռազմավարական խնդրի լուծում: Հայերի տեղահանման ծրագրերը ծագել էին «գերմանական ուղեղներում», թուրքերը պարզապես դրանք դարձրել են դյուրակատար և ընդլայնել իրագործման շրջանակները: Դյուրակատարությունն արտահայտվել է այսպես. թուրքերը, առանց պատճառաբանության, առանց դեսուդեն ընկնելու, տեղահանվող հայերին հենց գերմանական սպաների ներկայությամբ, առանց քաշվելու, նրանց բարեհոգի անտարբերությամբ, առանձին-առանձին և խմբերով ոչնչացնում էին տեղում, իսկ իրագործման շրջանակների ընդլայնումով երիտթուրքերը, սահմանային գոտիներից բացի, ընդգրկում էին բոլոր այն մարզերը, որտեղ բնակվում էին հայերը[8]*:*

Ալ. Ջիվելեգովը Արևմտյան Հայաստանի ինքնավարության ջերմ պաշտպանն էր: “Армянский вестник” *շաբաթաթերթի 1916 թ. սեպտեմբերյան առաջնորդողներից մեկում նա գրել է, որ ոչ մի սպառնալից ակնարկ և ոչ մի քաղաքական անբարենպաստ վիճակ մեզ չեն կարող ստիպել հրաժարվելու այն մտքից, որ հայ ժողովրդի ապագա ճակատագրի միակ ճիշտ որոշում համարենք ինքնավարությունը*[9]*: «Վերջապես եկավ վաղուց սպասված հեղափոխությունը… Ռուսաստանն այս օրերին ապրում է առանց ցարի, ազատ և ուրախ շնչում է ազատության օդը և կռում է իր ապագան»,– այսպիսի խոսքերով Ալ. Ջիվելեգովը դիմավորեց Ռուսաստանի Փետրվարյան հեղափոխությունը: Նա հույս ուներ, որ «նորոգ» Ռուսաստանում պետք է թագավորի ազատությունն ու հավասարությունը բոլոր ժողովուրդների համար: Ջիվելեգովը հեղափոխության հետ էր կապում նաև Հայկական հարցի լուծումը: Հայաստանի ինքնավարության պահանջը, ըստ Ջիվելեգովի, «մաքուր պահանջ է, ինչպես ձյունը Մասսի գագաթներին»: Ազատ Ռուսաստանը պետք է մաքրի գարշելի զրպարտության, անբարյացակամ չարակամության, շովինիստական նախապաշարումների կուտակված կեղտերը և ճանաչի հայ ժողովրդի ինքնավարությունը: Այդ նպատակի իրագործման համար գիտնականն անհրաժեշտ էր համարում առաջին հերթին հանել բոլոր այն սահմանափակումները, որոնք դժվարացնում էին թուրքահայ գաղթականների վերադարձը ռուսական զորքերի կողմից ազատագրված իրենց հայրենիքը: Ջիվելեգովն առաջնահերթ խնդիր էր համարում «թուրքահպատակ հայերի հետապնդումների» վերացումը, որոնք «դեռ մինչև պատերազմը հաստատվել էին Ռուսաստանում»: Իր «Ռուսական հեղափոխությունը և Հայաստանը» հոդվածը Ջիվելեգովը վերջացնում է հետևյալ տողերով. «Կեցցե՜ նոր հզոր Ռուսաստանը, և թող նրանում հաստատվի ազգային*

---

[8] *Տե՛ս* А. Д ж и в е л е г о в. Судьба Армении.– “Армянский вестник”, 1916, № 1, с. 5.

[9] *Տե՛ս* А. Д ж и в е л е г о в. Автономная Армения.– “Армянский вестник”, 1916, № 32, с. 1.

արդարության թագավորությունը»[10]: Մինչդեռ Ռուսաստանի Հանրապետության ժամանակավոր կառավարությունը Արևմտյան Հայաստանին ինքնավարություն ապահովելու ոչ մի նպատակ չուներ, շարունակում էր ցարիզմի վարած միակցման քաղաքականությունը:

Ճիշտ է, Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ռուսական բուրժուական մամուլը՝ “Речь”-ից սկսած մինչև տասնյակ տարիներով ամենակատաղի հակահայկական քարոզչություն փողհարող “Новое время” թերթը մեծ համակրանքով էին սկսել գրել հայերի ազատագրական ձգտումների մասին, իսկ “Русское слово”-ն կոչ էր անում՝ «զենքը ձեռքին միջամտել ի պաշտպանություն Հայաստանի»[11], բայց ոչ երբեք ինքնավար Հայաստանի: Դա Հայկական հարցի վերաբացման պահի դիվանագիտական մարտավարություն էր: Ռուսական լիբերալ բուրժուազիայի տնական դիրքորոշումն առավել որոշակի էր արտահայտվում կադետների պարագլուխ Պ. Միլյուկովի ելույթներում ու հոդվածներում. կարեկցանքով վերաբերվելով Թուրքիայում արևմտահայության կացությանը և շարունակ նշելով արևելահայության հավատարմությունը՝ նա երբեք չէր պաշտպանում հայկական անկախ պետություն ստեղծելու գաղափարը, ավելին, ուղղակի դեմ էր ինքնավարությանը, ընդունում էր միայն հայերի վերամիավորումը ռուսական պետության սահմաններում: Նա միաժամանակ գտնում էր, որ արևմտահայության ճակատագրի համար վնասակար հետևանքների պատասխանատվությունը կրում է նախևառաջ Անգլիան: Միլյուկովի համար Առաջին համաշխարհային պատերազմը գերմանական իմպերիալիզմի դեմ պատերազմ լինելուց զատ՝ Բալկաններում Ռուսաստանի ազդեցության հզորացման և նեղուցները վերջինիս միացման պատերազմ էր, որի համար նա ստացավ «Միլյուկով Դարդանելսկի» մականունը: Պառլամենտական պատվիրակության կազմում Անգլիայում եղած ժամանակ, 1916 թ., «Ֆորին օֆիսի» ղեկավար Էդ. Գրեյին Միլյուկովն ասել է. «Նեղուցները մեր դաշնագրի գինն են»: Էդ. Գրեյը պատերազմի նախօրեին հայկական բարենորոգումների, Հայկական հարցի նոր արծարծումների ժամանակ վարել է երկդիմի քաղաքականություն՝ ի վնաս հայերի Թուրքիային պաշտպանել է ընդդեմ Ռուսաստանի և, փաստորեն, ձախողել բարենորոգումների ռուսական ծրագիրը: Պատերազմի սկզբին Անտանտի ղեկավարներից Գրեյն առաջինն էր, որ բարձրացրեց Օսմանյան կայսրության անդամահատման հարցը՝ հայտարարելով, որ եթե Թուրքիան հանդես գա Գերմանիայի կողմում, ապա պետք է դադարի գոյություն ունենալուց: Գրեյի անմիջական մասնակցությամբ և ղեկավարությամբ են կնքվել Օսմանյան կայսրության, այդ թվում նաև Արևմտյան Հայաստանի բաժանման գաղտնի՝ Սայքս-Պիկոյի համաձայնագիրը: Պ. Միլյուկովը 1916 թ. Գրեյի հետ զրույցի ժամանակ ժխտում էր Ռուսաստանում բնակվող ժողովուրդների տարածքային և քաղաքական ինքնորոշման իրավունքը: Այսպես, օ-

[10] А. Д ж и в е л е г о в. Русская революция и Армения.– “Армянский вестник”, 1917, № 10—11, с. 3.

[11] “Русское слово”, 10. XI. 1912.

ռինակ, ռուսական ազդեցությունից լեհերի անկախության պահանջի առնչությամբ Միլյուկովն ասում է. «Մենք դեմ ենք միջազգային ակտում Լեհաստանի ներքին սահմանադրության վերաբերյալ հիշատակության...»[12]: Առավել ուշագրավն այն է, որ երբ 1914 թ. վերջերին հայ մամուլի որոշ հրապարակումներում, մասնավորապես «Հորիզոնի» էջերում, բանակռիվ սկսվեց Միլյուկովի դեմ այն բանի համար, թե ինչու է նա կողմ արտահայտվել հայկական նահանգների բռնակցման (անեքսիա) գաղափարին, վերջինս, որպես անդորրության պարգև հայերի գրգռված կրքերին, ստիպված եղավ հայտարարել, թե իր հասկացած բռնակցումը չի բացառում ինքնավարությունը, որ Արևմտյան Հայաստանի գոյությունը պատկերացնում է Բուխարայի կարգավիճակի նման: Այս խոստովանությունը գոհացրեց Հայ հեղափոխական դաշնակցությանը և «Հորիզոնը» ազատ արձակեց ռուս գործչի օձիքը[13]:

Հայկական հարցում Միլյուկովը շատ ավելի որոշակի արտահայտվեց Ջեյմս Բրայսի և Նոել Բաքստոնի հետ զրույցի ժամանակ: «Բազում մասնավոր հանդիպումներից, ծանոթություններից, նախաճաշերից ու ճաշերից հիշատակեմ միայն մի քանիսի մասին: Բրայսը և Նոել Բաքստոնը ինձ համար ճաշկերույթ էին կազմակերպել,– գրել է Պ. Միլյուկովը,– որի ժամանակ գլխավոր թեման Հայկական հարցն էր. երկուսն էլ Հայաստանի պաշտպաններն էին: Ինքս էլ լինելով այդպիսին, ես, սակայն, Ռուսաստանի գերիշխանության ներքո մեծ Հայաստանի ինքնավարությունը հակադրում էի տերությունների հովանավորության ներքո Հայաստանի անկախության նրանց ծրագրին: Ապագա Հայաստանի տարածքի վերաբերյալ հարցում ես հերքեցի, որ մենք դեպի Մոսուլ ենք ձգտում, և մեր ձգտումը սահմանափակեցի Դիարբեքիրով, այսինքն՝ լեռների և հարթավայրի սահմանով՝ դուրս թողնելով Փոքր Հայքը (Կիլիկիան) և Ալեքսանդրետը»[14]:

Հայկական հարցի վերաբերյալ Պ. Միլյուկովի տեսակետների կարևորման մեր նպատակն էր ցույց տալ, որ ռուսական լիբերալ բուրժուազիայի քաղաքական ուղեգիծը բնավ չէր շեղվում ցարական կառավարության որդեգրած քաղաքական ընթացքից: Հայ մտավորականության տարբեր շերտերում մոռացության կամ անուշադրության էր տրվում այն իրողությունը, որ Փետրվարյան հեղափոխությունը ռուսական բուրժուազիայի կողմից դիտվում էր պատերազմը շարունակելու, այն հաղթական ավարտին հասցնելու գլխավոր միջոց, ի հակակշիռ ցարական կառավարության անկարողության: Բնորոշ է, որ Փետրվարյան հեղափոխության հաղթանակից հետո Ժամանակավոր կառավարությունը ոչ մի անգամ չի ակնարկել Արևմտյան Հայաստանը Ռուսաստանին միակցելու ցարիզմի որդեգրած քաղաքականությունից հրաժարվելու մասին: Այսպիսին էր իրականությունը: Մինչդեռ 1917 թ. հոկտեմբերին, Ռուսաստանի Հանրապետության խորհրդում արտասանած իր ճառում, Ջիվելեգովը քննադատում է

---

[12] П. Н. М и л ю к о в. Воспоминания. Т. 2, Нью-Йорк, 1955, с. 185.

[13] *Տե՛ս Դ. Ա ն ա ն ի ն. Ռուսաստանի հասարակական զարգացումը XIX դարում, հ. III, Վենետիկ, 1926, էջ 581:*

[14] П. Н. М и л ю к о в. Воспоминания. М., 1991, с. 424.

Ժամանակավոր կառավարության և նրա արտաքին գործերի նախարարության «տարօրինակ» տատանումները Հայկական հարցում, որը նա կապում էր ցարական արտաքին գործերի նախարար Ս. Սազոնովի «ճշմարիտ ուղի» չգտնելու քաղաքականության հետ: «Դեմոկրատական Ռուսաստանից,– ասում է Ջիվելեգովը,– հայերը սպասում են այլ վերաբերմունք, Արևմտյան Հայաստանի նկատմամբ հայերը դեմոկրատական Ռուսաստանից այլ քաղաքականություն են սպասում»: Նշելով, որ դեմոկրատական Ռուսաստանը լուծել է «լեհական հարցը», Ջիվելեգովը գտնում էր, որ ռուս ժողովրդի պարտքը և ռուսական դեմոկրատիայի արժանապատվությունը հրամայաբար պահանջում են, որ Հայաստանի հարցը դառնա Ռուսաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության ուշադրության առարկան, այն չթողնվի բախտի քմահաճույքին[15]*:*

Ալ. Ջիվելեգովն իրավունք ուներ հարցին այդպես մոտենալու, որովհետև տակավին 1916 թ. փետրվարին Մինիստրների խորհրդի նախագահ Ս. Տրեպովի հայտարարության առթիվ իր գրած հոդվածում պատերազմում հաղթանակող տերություններից պահանջում էր (նա համոզված էր Անտանտի հաղթանակում) Թուրքիայից անջատել Միջագետքը, Արաբիան, Սիրիան, Հայաստանը, Կիլիկիան, Լազիստանը և փոքրասիական ծովեզերքի արևմտյան մասը: Եվ քանի որ եվրոպական հաղթանակող պետություններին հազիվ թե հաջողվեր Թուրքիան ենթարկել այնպիսի բաժանման, որ նա դադարեր որպես պետություն գոյություն ունենալուց, ուստի վերոհիշյալ կոմբինացիան Ջիվելեգովին հարմար էր թվում գալիք Հայաստանի համար, քանի որ դրանից հետո 7–8 միլիոն թուրքերով բնակեցված անատոլիական Թուրքիան վտանգ չէր ներկայացնի հարևանների համար թե՛ այժմ և թե՛ ապագայում[16]*:*

Ինչպիսի՞ն էր պատկերացնում Ջիվելեգովը Հայաստանի քաղաքական ապագան 1917 թ. աշնանը: Նա այն համոզմունքն ուներ, թե Թուրքահայաստանի լիակատար ինքնավարությունը Հայկական հարցի միակ իրական և հնարավոր լուծումն է: Նրա կարծիքով ինքնավար Հայաստանը պետք է զբաղեցներ հայկական վեց վիլայեթները: Միաժամանակ այդ վեց վիլայեթներից պետք է անջատեին այն ծայրամասերը, որոնք ռուս-թուրքական 1870-ական թվականների պատերազմից հետո միակցվել էին նրանց՝ նպատակ ունենալով հօգուտ թուրքերի փոխել էթնիկական վիճակը: Ջիվելեգովը չէր պատկերացնում Հայաստանն առանց Ռուսաստանի, այդ իսկ պատճառով նա հայկական ինքնավարության ստեղծման և գոյատևման երաշխիքը տեսնում էր Ռուսաստանի Հանրապետության հովանավորության ներքո: Նա գտնում էր, որ ինքնավար Հայաստանի մանդատը պետք է հանձնվի Ռուսաստանին[17]*:*

Ալ. Ջիվելեգովը դրական է արտահայտվել Ռուսաստանի խորհրդային կառավարության «Թուրքահայաստանի մասին» դեկրետի առթիվ, ընդամենը հու-

---

[15] *Տե՛ս* А. Д ж и в е л е г о в. Речь в Совете Республики 20 октября 1917 г.– “Армянский вестник”, 1917, № 43–44, с. 4–5.

[16] *Տե՛ս* А. Д ж и в е л е г о в. Заявление Трепова и Армянский вопрос.– “Армянский вестник”, 1916, № 44, с. 1–2.

[17] *Տե՛ս* “Армянский вестник”, 1917, № 44, с. 15.

սալով, որ «Ռուսաստանի օգնությունը կարող է արտահայտվել միայն նրանում, որ Հայաստանում թողնվի ռուսական բանակի գոնե մի մասը»[18]: Ի դեպ, նման տեսակետի էր նաև Վահան Տերյանը, որը հանուն արևմտահայության ազգային համախմբման իր ծրագիրը հիմնավոր շարադրեց 1917 թ. նոյեմբերին Ռուսաստանի ժողկոմխորհին ներկայացրած Թուրքահայաստանի մասին զեկուցագրում (“Докладная записка о Турецкой Армении”)*: Վերլուծելով արևմտահայության մղձավանջային դրությունը, բնութագրելով Օսմանյան կայսրության հայաջինջ քաղաքականությունը և իմպերիալիստական տերությունների շահամոլությունը, Տերյանը նշում է Հայկական հարցի լուծման ուղին: Տերյանի զեկուցագրում ընդգծվում էր. «Ռուսական զորքերը դուրս չեն բերվի պատերազմի իրավունքով մեր կողմից գրավված Հայաստանի մասից, մինչև այնտեղ չստեղծվեն անձնական անվտանգության հաստատուն երաշխիքներ, և մինչև այնտեղ նոր կարգ չհաստատվի: Անհրաժեշտ է, որ «պատերազմի իրավունքով» գրավված Հայաստանի մարզերի կառավարումը անմիջականորեն կապված լինի կենտրոնական իշխանության հետ և թույլ չտրվի ենթարկելու հատուկ Անդրկովկասյան կոմիտեի կամ այլ տեղական իշխանության, քանի որ ինչպես փորձը ցույց է տվել, կառաջացնի տեղական քաղաքական և հասարակական պայմաններից բխող մի ամբողջ շարք բարդություններ»[19]:*

1917 թ. դեկտեմբերի 29-ին Խորհրդային Ռուսաստանի ժողկոմխորհն ընդունեց «Թուրքահայաստանի մասին» դեկրետը, որում տեղ չէին գտել Տերյանի առաջարկությունները: Այդ փաստաթուղթը Հայկական հարցի գալիք արծարծումներում չունեցավ ոչ մի դրական հայանպաստ դերակատարություն: Պատմությունը հակառակ գնաց հայ երկու մեծերի՝ գիտնական Ջիվելեգովի և բանաստեղծ Տերյանի շատ չափավոր ցանկություններին:

Ալ. Ջիվելեգովը վերջին անգամ Հայկական հարցին անդրադարձել է 1946 թ. փետրվարի 20-ին Մոսկվայում կարդացած «Հայաստանը և Թուրքիան» թեմայով զեկուցման մեջ, որտեղ գիտնականը հայոց Մեծ եղեռնը համարել է աննախադեպ ամենախոշոր ոճիրը համաշխարհային պատմության մեջ՝ Չինգիզ խանի և Լանկթեմուրի ժամանակներից ի վեր: Նա փաստերի ու միջազգային գործոնների խոր վերլուծությամբ պատասխանեց այն հարցին, թե ինչո՞ւ հայոց պատմությունը կերտվեց այսպես, այլ ոչ թե մի ուրիշ կերպ:

Ալ. Ջիվելեգովը գրավոր խոսքի մեծ վարպետ էր, տիրապետում էր մտքին նրբերանգներ հաղորդող հարուստ բառապաշարի: Հարուստ այդ բառապաշարով են գրված և՛ եվրոպական միջնադարին ու Վերածննդին նվիրված նրա ուսումնասիրությունները, և՛ համաշխարհային մշակույթի հսկաների մասին մենագրությունները, և՛ Հայկական հարցին և ցեղասպանության վերաբերյալ սրտակեղեք հրապարակախոսությունը: Ալ. Ջիվելեգովը XX դ. առաջին կեսի խոշորագույն պատմաբան հասարակագետներից էր, քաղաքական հայագիտության հիմնադիրներից մեկը:

---

[18] А. Д ж и в е л е г о в. Советский декрет о независимости Армении.– “Армянский вестник”, 1918, № 3, с. 1.

[19] *Վ. Տ ե ր յ ա ն. Երկեր, Երևան, 1989, էջ 399:*

АЛЕКСЕЙ ДЖИВЕЛЕГОВ И АРМЯНСКИЙ ВОПРОС

НОРАЙР САРУХАНЯН

Р е з ю м е

Ал. Дживелегов (1875–1952) был крупным историком, искусствоведом, публицистом. Основные направления научных интересов Ал. Дживелегова – история стран Европы–средневековье и Возрождение. Перу Дживелегова принадлежит серия работ, посвященных различным проблемам новой истории стран Западной Европы. Ученый энергично занимался также проблемами политической арменистики, Армянским вопросом. В книге “Армяне в России” (1906 г.) он знакомил русского читателя с историей армянского народа, его историческими и культурными связями с Россией, осуждал политику царского правительства в Закавказье. Монография “Будущее Турецкой Армении” (1911 г.) – обстоятельный очерк истории Армянского вопроса, политики великих держав в отношении Западной Армении. Дживелегов показывает бессилие “языка слез” М. Хримяна перед корыстолюбием Европы, в частности, перед британской дипломатией. Ал. Дживелегов в 1916 г. стал одним из организаторов, а затем и редактором еженедельника “Армянский вестник”. Своей энергичной деятельностью и авторитетом он сплотил вокруг еженедельника видных представителей русской интеллигенции, выступавших в защиту западных армян. Дживелегов в статье “Судьба Армении” (1916 г.) осуждал политику младотурок, критиковал позицию великих держав в Армянском вопросе, а спасение армянского населения Турции связывал с победой России над Германией и созданием Армянской автономии под покровительством России.

ALEXEY JIVELEGOV AND THE ARMENIAN QUESTION

NORAYR SARUKHANYAN

S u m m a r y

Alexey Jivelegov (1875–1952) was a well-known historian, art critic, publicist, whose main specialization was the history of Europe – periods of the Middle Ages and Renaissance. At the same time he was the author of a series of works, devoted to the modern history of the Western Europe. The great scholar paid special attention to the problems of political Armenology and the Armenian question in his studies and social activities. In his monograph “Armenians in Russia” (1906) he introduced the Russian reader to the history of Armenia, its historical and cultural links with Russia. His monograph “The Future of the Turkish Armenia” (1911) is a fundamental essay on the history of the Armenian question, the policy of the Great Powers on the problem of the Western Armenia. Here he showed the powerlessness of M. Khrimyan’s “language of tears” in the face of mercenariness of Europe, especially in case of the British diplomacy. In 1916 Jivelegov became one of the organizers and then the editor of the magazine “Armenian Bulletin”. He succeded in his attempts to create a circle of Russian intellectuals around the magazine, who spoke at that time in the interests of the Western Armenia. Jivelegov in his article “Fate of Armenia” (1916) criticized the policy of the Young Turks and presented the opinion that the future of the Western Armenia’s survival depended on Russia and Russian policy.